ԷՋԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո մեր երկրի առջև ամբողջ սրությամբ դրվեց ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիստական վերակառուցման հարցը։ Անհրաժեշտ էր գործի գցել երկրում եղած արդյունաբերական ձեռնարկությունները, ստեղծել նորերը։

Սակայն այդ հարցի հաջող լուծումը մեծ մասամբ կախված էր որակյալ մասնագետ կադրերի առկայությունից, նրանց պատրաստման տեմպերից։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը հեղափոխությունից անմիջապես հետո, ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց, առաջ է քաշում բանվորական կադրերի պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման հարցը։ Պրոֆեսիոնալ կրթությամբ կադրերի պատրաստման հրատապ պահանջը բխում էր սոցիալիստական շինարարության խնդիրներից։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ սոցիալիզմի արագ կառուցման կարևոր նախապայմաններից մեկը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար որակյալ կադրերի առկայությունն է։ «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «առանց գիտությունների, տեխնիկայի, փորձի, զանազան ճյուղերի մասնագետների ղեկավարության, անկարելի է սոցիալիզմին անցնել, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն»[1]։

1920 թ. հուլիսին հրապարակվեց Լենինյան դեկրետը՝ «Աշխատավորների պրոֆեսիոնալ-տեխնիկական պարտադիր ուսուցման մասին»։ Դեկրետում նշված էր, որ 18—40 տարեկան հասակի բոլոր բանվորները պետք է անցնեն պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման դասընթացներ։ Այդ գործը պետք է այնպես կազմակերպել, նշել է Վ. Ի. Լենինը, որ ուսումը կապվի արտադրողական աշխատանքի հետ, աճող սերունդը դաստիարակվի կոմունիստական բարոյականության ոգով[2]։ Լենինյան այդ գաղափարը դարձավ այն հիմնաքարը, որի վրա մեր երկրում հետագայում կառուցվեց պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության ամբողջ սիստեմը։

1920 թ. Սովետական Ռուսաստանում ստեղծվեցին առաջին ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցները (ՖԶՍ), որտեղ ապագա երիտասարդ բանվորները ձեռք էին բերելու պրոֆեսիոնալ և տեխնիկական կրթություն։ Այդ դպրոցներում ուսուցումը բարդ մասնագիտությունների գծով տևում էր 3—4 տարի, իսկ մասսայական մասնագիտությունների գծով՝ 2—3 տարի։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 295։

[2] Տե՛ս նույն տեղում, հ. 31, էջ 353։

Դպրոցները կազմակերպվում էին ձեռնարկություններին կից և սովորողները համարվում էին տվյալ ձեռնարկության աշխատողներ։

Սակայն այդ դպրոցները կարող էին միայն մասնակիորեն բավարարել զարգացող արդյունաբերության պահանջները։ Ուստի, դրանցից բացի, 20-ական թվականներին ստեղծվեցին դպրոց-արհեստանոցներ, տարբեր ժամկետներով դասընթացներ, որոնք հնարավորություն տվեցին պատրաստելու մեծ թվով որակյալ բանվորներ։ Այդ միջոցառումը մեծ դեր խաղաց սոցիալիստական շինարարության տարիներին։ Սակայն զարգացող սոցիալիստական արդյունաբերությանն անհրաժեշտ էին ավելի շատ որակյալ բանվորներ և մասնագետներ։

Ելնելով դրանից, կուսակցությունն ու սովետական կառավարությունը դրեցին նոր բանվորական կադրերի մասսայական պատրաստման խնդիրը։ Ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարվեցին։ Արդեն 1924 թ. հանրապետությունում լուսժողկոմատին ենթակա տեխնիկումներում, դպրոց-արհեստանոցներում, կարճատև դասընթացներում սովորողների թիվը հասավ 1113-ի[3]։ 1925 թ. Լենինականի տեքստիլ կոմբինատի բազայի վրա ստեղծվեց առաջին ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցը[4]։

Չնայած դրան, որակյալ բանվորների և ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստման հարցը Հայաստանի համար մնում էր որպես կարևորագույն խնդիրներից մեկը։ Այդ է վկայում Համահայաստանյան ուսուցչական առաջին համագումարը, որը լուսժողկոմ Ա. Մռավյանի զեկուցման առթիվ ընդունած բանաձևում արձանագրել է. «Մեր տնտեսության երկու հիմնական ճյուղերը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը բարձրացնելու համար... պահանջվում է որակյալ բանվորների մեծ քանակ, Հայաստանի գյուղի և քաղաքի տնտեսության հետագա արագ զարգացումը պահանջում է գյուղատնտեսական և պրոֆեսիոնալ կրթության արագ կազմակերպում»[5]։

1926 թ. դեկտեմբերին Հայաստանի կոմկուսի III ընդլայնված պլենումը նորից անդրադարձավ որակյալ բանվորական կադրերի պատրաստման հարցին և ընդգծեց «որակյալ բանվորների և տեխնիկապես զեկավարող կադրերի պատրաստման, ինչպես նաև գոյություն ունեցող կադրերի վերապատրաստման հրամայական անհրաժեշտությունը»։ Երկու տարի անց՝ 1928 թ. Հայաստանի յոթ գավառային կենտրոններում բացվեցին կար ու ձևի պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցներ, կարճատև դասընթացներում պատրաստվում էին հաշվապահներ, էլեկտրատեխնիկներ, հեռագրիչներ, վարորդներ, կոոպերատիվ աշխատողներ և այլն։ Երևանում գործում էր նաև կենտրոնական դպրոց-արհեստանոցը, որտեղ սովորում էին 216 անապատան երեխաներ[6]։

Լայն տարածում գտավ նաև բանվորների վերապատրաստումն անմիջականորեն արտադրության մեջ՝ անհատական և բրիգադային ուսուցման մեթոդով։ Պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության այդ ձևը որոշակիորեն նպաս-

---

3 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 148, ց. 1, գ. 282, թ. 89։

4 Տե՛ս Ս. Ա. Միքայելյան, Պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1960, էջ 7։

5 «Խորհրդային Հայաստան», 10. I. 1925։

6 Տե՛ս Восстановление народного хозяйства Арм. ССР, изд. АН Арм. ССР, Ереван, 1958, стр. 481.

տեց ազգային որակյալ կադրերի պատրաստման գործի բարելավմանը։ Արտադրության մեջ ավելացավ երիտասարդ բանվորների քանակը և, ինչպես նշվեց կոմերիտմիության Համահայաստանյան V համագումարի թեզիսներում, հանրապետության արդյունաբերության մեջ զբաղված բանվորության կազմում երիտասարդ բանվորների թիվը 21,3 տոկոսից հասավ 34 տոկոսի[7]։

Երիտասարդության պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության բարելավմանը մեծ չափով նպաստեց ՀամԿ(բ)Կ 1928 թ. հուլիսյան պլենումը, որն արձանագրեց՝ «Նոր մասնագետների պատրաստումը դառնում է ամբողջ կուսակցության կարևորագույն խնդիրը»[8]։

Կենսագործելով կուսակցության դիրեկտիվները 1929—1930 թթ. Հայաստանում լուրջ ուշադրություն է դարձվում բանվորական կադրերի պատրաստման գործին. այդ տարիներին կազմակերպվում են ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցը (Լենինականի տեքստիլ կոմբինատի բազայի վրա), մեխանիկական ֆաբգործուսը (Լենինականի երկաթգծին կից) և հանքագործական ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցը (Ալավերդու պղնձահանքերին կից)[9]։

Ինչպես Սովետական Միության բոլոր հանրապետությունների, այնպես էլ Սովետական Հայաստանի համար առաջին հնգամյակի տարիները ինդուստրիայի զարգացման տեսակետից շրջադարձային նշանակություն ունեցան։ Հանրապետության համար առաջին հնգամյակի հիմնական խնդիրներն էին՝ «Հայաստանում հայտնաբերել երկրի բնական հարստությունները, մեր նահապետական գյուղատնտեսական երկիրը փոխադրել արդյունաբերական զարգացման ռելսերի վրա... Հանրապետությունում զարկ տալ մասսաների կուլտուրական վերելքին, աճող ու բարձրացող ժողովրդական տնտեսությունը ապահովել որակավոր, սեփական կադրերով»[10]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ առաջին հնգամյակի տարիներին ներդրվեց 319,3 միլիոն ռուբլի, պլանով նախատեսված 276,8 միլիոնի դիմաց[11]։ Այդ ընթացքում հանրապետությունում գործարկվեցին 22 նոր արդյունաբերական ձեռնարկություն և 6 հիդրոկայան։

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի 1929 թ. նոյեմբերյան պլենումը քննության առնելով տեխնիկական կադրերի պատրաստման վերաբերյալ հուլիսյան պլենումի որոշման կատարման ընթացքը, միջոցներ ձեռնարկեց տեխնիկական ու բանվորական կադրերի պատրաստման գործի հետագա բարելավման ուղղությամբ։ Այդ կապակցությամբ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման ու բանվորական որակյալ կադրերի պատրաստման աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարությունը լուսժողկոմատների տնօրինությունից հանձնվեցին արդյունաբերական գերատեսչություններին, որով որոշակիորեն ամրապնդվեց դպրոցների, դասընթացների նյութական ու տնտեսական բազան։

---

7 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 48, ց. 51, գ. 858, թ. 11—12։

8 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, Երևան, 1955, մաս 2, էջ 657։

9 Տե՛ս ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 48, ց. 62, գ. 1086, թ. 9, 32։

10 Ա. Խանջյան, Հնգամյակի հաղթանակը և խորհրդային Հայաստանը, Երևան, 1933, էջ 15։

11 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, «Լույս», 1969, էջ 321։

Որակյալ կադրերի պատրաստմանը մեծ զարկ տրվեց նաև մեր հանրապետությունում, զգալիորեն ավելացավ ուսումնական հաստատությունների և նրանցում սովորողների թիվը։ Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանում գործում էին 9 ինստիտուտ, 10 բանֆակ, 31 պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոց, գործարանային վերարտադրման կարճատև դասընթացներ ու մեծ թվով տեխնիկումներ[12]։ Կարճ ժամանակամիջոցում հանրապետության բուհերը և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսությանը տվեցին ավելի քան 9000 մասնագետներ[13]։

1928—1932 թթ. Հայաստանում արագ թափով զարգացավ արդյունաբերությունը։ Շարք մտան Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը, Երևանի ծխախոտի ֆաբրիկան, Ղափանի պղնձի հարստացուցիչ ֆաբրիկան, Սարդարապատի բամբակազտիչ գործարանը և այլն։ Արդյունաբերության զարգացումը հնարավորություն տվեց հանրապետության խոշոր ձեռնարկություններում կենտրոնացնելու մասնագետներին ու որակյալ կադրերին։

Այսպես, Հայրենական պատերազմի նախօրյակին Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատում աշխատում էին 1600 մասնագետներ ու որակյալ բանվորներ, Զանգեզուրի պղնձահանքային կոմբինատում՝ մոտ 1000, Ալավերդու պղնձաձուլական գործարանում՝ 500, Լենինականի տեքստիլ կոմբինատում՝ 1500։ Ավելի քան 2000 մասնագետներ և որակյալ բանվորներ աշխատում էին հանրապետության թեթև արդյունաբերության ձեռնարկություններում[14]։

Սակայն հանրապետության ժողովրդական տնտեսության հետագա վերելքը նոր, ավելի բարձր պահանջներ էր ներկայացնում բանվորական կադրերի պատրաստման ուղղությամբ։ Մասնավորապես ծանր արդյունաբերության զարգացումը, արդյունաբերական ձեռնարկությունների հագեցումը ժամանակակից մեքենաներով ու սարքավորումներով, պահանջում էին բարձր որակավորում ունեցող բանվորական կադրեր։ «Այժմ,— նշել է Ն. Կ. Կրուպսկայան,— այս կամ այն պրոֆեսիայի համար պատրաստվողից պահանջվում է արդեն ոչ թե նեղ տեխնիկական վարժություն, այլ դազգահի հետ վարվելու, իր դազգահի աշխատանքն առավել արտադրողաբար կազմակերպելու ունակություն, ընդհանուր ծանոթություն ամբողջ արտադրության հետ»[15]։

Հանրապետությունում սոցիալիզմի կառուցման տարիներին բանվոր դասակարգի համալրումը կատարվում էր գյուղի հաշվին՝ կազմակերպված հավաքագրման միջոցով։ Սակայն արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը՝ նոր տեխնիկայի բազայի հիման վրա, պահանջում էր ավելի ու ավելի շատ որակյալ բանվորական կադրեր, մինչդեռ գյուղից հավաքագրվածները, պայմանագրային ժամկետը լրանալուց հետո, նորից վերադառնում էին գյուղ։ Իրենց շարդարացրին նաև ֆաբրիկագործարանային աշակերտության դպրոցները. եթե 1931—32 ուստարում ՍՍՀՄ-ում կար ֆաբգործուսի 3970 դպրոց՝ 970000 աշակերտներով, ապա 1938—1939 ուստարում ընդամենը մնա-

---

12 Փ. Ի. Ենդոյան, Հայաստանը ինդուստրացման ուղիով, Երևան, 1967, էջ 55։

13 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, «Լույս», 1969, էջ 325։

14 Տե՛ս Соц. строительство в Арм. ССР (1920—1940 гг.), Ереван, 1940, стр. 115.

15 Ն. Կ. Կրուպսկայա, Երիտասարդության մասին, Երևան, 1947, էջ 155։

ցել էր 1535 դպրոց՝ 242000 աշակերտով[16]։ Եվ դա այն դեպքում, երբ ՍՍՀՄ-ի արդյունաբերությանը այդ նույն ժամանակաշրջանում չէր բավականացնում մոտավորապես 1,3 մլն. բանվոր[17]։

Ֆաբգործուսի դպրոցները, որոնք երկրի ինդուստրացման տարիներին մեծ դեր էին կատարել որակյալ բանվորական կադրերի պատրաստման գործում, արդեն չէին համապատասխանում նոր պահանջներին։ Երկրի արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մնացած ճյուղերի զարգացումը հրամայաբար պահանջում էր լուրջ փոփոխություններ մտցնել երիտասարդ որակյալ բանվորական կադրերի պատրաստման գործում։

ՍՍՀՄ Գերագույն սովետը 1940 թ. հոկտեմբերի 2-ին որոշում ընդունեց պետական աշխատանքային ռեզերվներ ստեղծելու մասին։ Նրանում ասված էր. «Մեր արդյունաբերությունը ավելի ընդարձակելու խնդիրը հրամայաբար պահանջում է բանվորական ուժի մշտական ներհոսում դեպի հանքահորերը, տրանսպորտը, ֆաբրիկաներն ու գործարանները։ Առանց բանվոր դասակարգի կազմն անընդհատ համալրելու, հնարավոր չէ մեր արդյունաբերության հաջող զարգացումը։ Այդ պայմաններում պետության առջև խնդիր է դրվում՝ կազմակերպված ձևով նոր բանվորներ պատրաստել քաղաքային ու կոլտնտեսային երիտասարդությունից և արդյունաբերության համար անհրաժեշտ աշխատանքային ռեզերվներ ստեղծել»[18]։

Աշխատանքային ռեզերվների ստեղծումը դարձավ մեր երկրի բանվոր դասակարգի շարքերը պլանաչափ կերպով համալրելու հզոր աղբյուր։ Պետական աշխատանքային ռեզերվների ստեղծումը նոր էջ էր բացում պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության պատմության մեջ։

Բանվոր դասակարգի համալրման նոր սիստեմի առանձնահատկություններն էին.

1. Արհեստագործական ուսումնարանների և ֆաբգործուսի դպրոցների ամբողջ սիստեմը կենտրոնացվում էր ՍՍՀՄ Մինիստրների սովետին կից աշխատանքային ռեզերվների գլխավոր վարչությունում. մինչդեռ ֆաբգործուսի դպրոցները չունեին միասնական ղեկավար օրգան և ենթարկվում էին գերատեսչություններին ու ձեռնարկություններին։

2. Այդ ուսումնական հաստատությունները համարվեցին պետական աշխատանքային ռեզերվներ, որոնց հաշվին արդյունաբերությունը, տրանսպորտը և շինարարությունը պետք է համալրվեին պահանջվող քանակի որակյալ բանվորական կադրերով։

3. Արհեստագործական ուսումնարանները և ֆաբգործուսի դպրոցները կոմպլեկտավորվելու էին կազմակերպված ձևով՝ այդ ուսումնական հաստատություններում սովորելու համար հավաքագրելով քաղաքի և գյուղի երիտասարդությանը (նախկինում կոմպլեկտավորումը կատարվում էր ազատ ընտրության հիմունքներով)։

---

16 А. С. Веселов, Профессионально-техническое образование в СССР. Очерки по истории сред. и низшего профтехобразования, М., 1961, стр. 237.

17 Н. Н. Забелин, Г. Н. Зеленский, Ф. И. Котов, В. Т. Рощин, Планирование подготовки и распределение рабочих кадров в СССР, М., 1960, стр. 16.

18 «Սովետական Հայաստան», 4. X. 1940։

4. Այդ ուսումնական հաստատությունների սովորողների բոլոր ծախսերը պետությունն ամբողջապես վերցնում էր իր վրա։

5. Աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունները մեր երկրի երիտասարդության առջև բացեցին լայն հնարավորություններ։ Ուսումնարաններում և դպրոցներում պայմաններ էին ստեղծվում սովորողների անհատական ընդունակությունների զարգացման համար։

6. Ի տարբերություն ֆաբրիկագործարանային աշակերտության դպրոցների, որոնց շրջանավարտները տեղավորվում էին աշխատանքի միայն այն գերատեսչություններում, որոնց բազայի վրա ստեղծված էր դպրոցը, արհեստագործական ուսումնարանների և ֆաբգործուսի դպրոցների շրջանավարտները երեք տարի պարտադիր կարգով գտնվում էին պետության տրամադրության տակ, որը հնարավորություն ուներ նրանց օգտագործել ըստ անհրաժեշտության։

7. Վերջապես, այդ ուսումնական հաստատություններում երիտասարդությունը, տիրապետելով հանրակրթական և ընդհանուր տեխնիկական առարկաներին, անցնում էր քաղաքական դաստիարակության որոշակի դպրոց. նրա մեջ ձևավորվում էին կոմունիստական գիտակցության, կուլտուրական վերաբերմունքի, կոլեկտիվիզմի և ընկերական փոխօգնության տարրեր։

Այսպիսով, պետական աշխատանքային ռեզերվների սիստեմի ստեղծումը հնարավորություն տվեց կենսագործելու բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական զարգացման արագ վերելքը։ Այն մեր պետության տնտեսական քաղաքականության արտացոլումն էր և նպաստեց սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի կենսագործմանը, ժողովրդական տնտեսության համաչափ զարգացմանը։ Հնարավորություն ստեղծեց հարաբերակցություն սահմանելու ժողովրդական տնտեսության զարգացման և որակյալ բանվորական կադրերի վերարտադրության, ինչպես նաև ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի միջև բանվորական ուժի ճիշտ և համաչափ վերաբաշխում կատարելու համար։

ՍՍՀՄ Ժողկոմխորհի 1940 թ. հոկտեմբերի 2-ի որոշման համաձայն, Հայաստանի Ժողկոմխորհը նույն թվականի հոկտեմբերի 19-ին կազմակերպեց Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեզերվների վարչություն, որի նպատակն էր հանրապետության զարգացող արդյունաբերությունը, շինարարությունը և տրանսպորտն ապահովել որակյալ բանվորական կադրերով։ Այդ որոշմամբ նախատեսվում է 1940 թ. նոյեմբերի 10—25-ը ընկած ժամանակաշրջանում հանրապետության աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատություններում սովորելու համար քաղաքային և գյուղական երիտասարդությունից հավաքագրել 1000 մարդ՝ այդ թվում արհեստագործական ուսումնարաններում ընդգրկել 14—15 տարեկան անչափահասներից 600 հոգի և ֆաբգործուսի դպրոցներում՝ 16—17 տարեկաններից 400 հոգի[19]։

Հանրապետության երիտասարդությունը կառավարության այս որոշումը ջերմորեն ընդունեց։ Հայաստանի կուսակցական, կոմերիտական կազմակերպությունները և սովետական օրգանները լայն բացատրական աշխատանք կազմակերպեցին երիտասարդության շրջանում՝ նրանց արհեստագործական և ֆաբգործուսի դպրոցներում ընդգրկելու համար։ Արդյունքը եղավ այն, որ

---

19 Նույն տեղում, 20. X. 1940։

նոր բացվող ուսումնարաններում և ֆաբգործուսի դպրոցներում նախատեսված 1000 տեղի դիմաց ստացվեց ավելի քան 3000 դիմում[20]։

Հանրապետության կառավարության որոշմամբ 1940 թ. դեկտեմբերին Երևանում կազմակերպվեց երկու արհեստագործական ուսումնարան՝ յուրաքանչյուրը 300-ական սովորողներով՝ քիմիական և մետաղամշակման արդյունաբերության համար[21]։ Բացվեցին նաև երեք ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներ, և աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունների ցանցն աստիճանաբար ընդարձակվեց։

ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի 1941 թ. մայիսի 9-ի որոշմամբ հանրապետության արհեստագործական ուսումնարաններում և ֆաբգործուսի դպրոցներում հավաքագրվում են 1600 պատանիներ ու աղջիկներ։ Ղափանի պղնձահանքերի կոմբինատին կից ֆաբրիկագործարանային աշակերտության դպրոցը վերակազմվում է ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցի, իսկ Լենինականի ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցը վերածվում է երկաթուղային արհեստագործական ուսումնարանի[22]։

Մեր հայրենիքի վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից հետո, երբ մշակվեցին երկրի էկոնոմիկան պատերազմի պայմաններին համապատասխան կազմակերպելու միջոցառումներ, փոխվեցին նաև արհեստագործական ուսումնարանների և ֆաբգործուսի դպրոցների պրոֆիլն ու աշխատանքի բովանդակությունը։ Կրճատվեց ուսման տևողությունը, ամբողջ ուշադրությունը կենտրոնացվեց պետական պլանների կատարման և ռազմաճակատի կարիքները հոգալու վրա։ Պատերազմական պայմաններում անհրաժեշտ էր ընդարձակել գործող արհեստագործական ուսումնարանների և ֆաբգործուսի դպրոցների ցանցը և ավելացնել նրանցում սովորողների թիվը։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1942 թ. հունվարի որոշմամբ հանձնարարվեց հանրապետության աշխատանքային ռեզերվների վարչությանը՝ հավաքագրման կարգով ֆաբրիկագործարանային դպրոցներում ընդգրկել 2000 պատանիներ ու աղջիկներ, ֆաբգործուսի № 5 դպրոցի բազայի վրա կազմակերպել նոր ֆաբգործուսի դպրոց՝ 640 սովորողներով, անհրաժեշտ օգնություն ցույց տալ ուսումնական հաստատություններին, դրանք ապահովել անհրաժեշտ քանակությամբ սարքավորումներով ու այլ միջոցներով[23]։ Կարճ ժամանակում զգալիորեն բարելավվեց նրանց նյութական բազան։ 1944 թ. աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունների համար բյուջեով նախատեսված ծախսերը կազմում էին արհեստագործական ուսումնարանների գծով՝ 9 միլ. 446 հազար ռուբլի և ֆաբգործուսի դպրոցների գծով՝ 3 մլն. 715 հազար ռուբլի[24]։ 1944 թ. հանրապետությունում արհեստագործական ուսումնարանների և ֆաբգործուսի դպրոցների թիվը ավելացավ 5-ով[25]։

Պատերազմական տարիներին Հայաստանի աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունները հսկայական աշխատանք կատարեցին ար-

---

20 «Ավանգարդ», 3. XII. 1940։
21 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 244, թ. 75։
22 Նույն տեղում, ց. 30, գ. 241, թ. 9։
23 Տե՛ս նույն տեղում, ց. 31, գ. 271, թ. 7։
24 Տե՛ս ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 591, ց. 2, գ. 63, թ. 64։
25 Տե՛ս ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 34, գ. 10, թ. 27։

տադրական ձեռնարկությունները որակյալ կադրերով ապահովելու ուղղությամբ և իրենց լման ներդրեցին թշնամուն ջախջախելու գործում։

Ինչպես նշվեց ՀԿԿ Կենտկոմի 1945 թ. սեպտեմբերյան պլենումում, պատերազմի տարիներին հանրապետության արհեստագործական ուսումնարաններն ու ֆաբգործուսի դպրոցները պատրաստել և արտադրական ձեռնարկություններին են հանձնել 9589 երիտասարդ որակյալ բանվորներ։ Այդ ուսումնական հաստատությունների սովորողները ռազմաճակատի կարիքների համար պատրաստել են 500000 ռուբլու արտադրանք[26]։

Սոցիալիստական շինարարության տարիներին, Հայաստանի ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան, զարգանում է աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունների ցանցը։ Հանրապետության էկոնոմիկայի զարգացումը և տեխնիկական առաջադիմությունը անհրաժեշտություն դարձրին ստեղծելու մի շարք ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներ և արհեստագործական ուսումնարաններ, աճեց նրանցում սովորողների քանակը և բարձրացավ նրանց հանրակրթական մակարդակը։ Այդ բոլորը խոշոր նշանակություն ունեցան ինչպես բանվորական որակյալ կադրերի պատրաստման բուն պրոցեսի բարելավման, այնպես էլ բանվոր դասակարգի ձևավորման, հետևաբար և Հայաստանի էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման համար։

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ПРОФТЕХОБРАЗОВАНИЯ АРМЯНСКОЙ ССР

В. А. ГРИГОРЯН

Резюме

Наиболее целесообразной формой подготовки квалифицированных кадров были школы фабрично-заводского ученичества. Первая такая школа была открыта в 1925 г. на базе Ленинаканского текстильного комбината. В дальнейшем такие школы были созданы в Ереване, Алаверди, Кафане и в других местах.

Сеть учебных заведений подобного рода в Армении начала развиваться после Указа Президиума Верховного Совета СССР от 2 октября 1940 г. в связи с созданием системы трудовых резервов в нашей стране.

За короткий срок в Армении один за другим создаются школы ФЗО и ремесленные училища. Перед войной их в республике насчитывалось уже 11, где обучались около 3355 человек. В этих учебных заведениях обучались и направлялись на производство тысячи юношей и девушек, заменившие тех кадровых рабочих, которые отбыли на фронт. Как отмечалось на сентябрьском пленуме ЦК КП Армении 1945 г., учебные заведения в системе трудовых резервов в годы войны подготовили и передали народному хозяйству республики 9589 квалифицированных рабочих.

---

26. Նույն տեղում